Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 8-ի N 1913 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 718-Ն որոշման

ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

**Ստուգաթերթ N 1.23**

**Հելմինթոզների համաճարակաբանական վերահսկողության**

**(ՏԳՏԴ ծածկագիր՝ Q 86)**

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

______________________________________________________________________________
Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը, հեռախոսահամարը, գտնվելու վայրը

__________________________________ __________________________________
ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

__________________________________ __________________________________
ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ ____________ 20______թ.________________ ավարտը՝______20 __ թ.________

______________________________________________________________________________________

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

___________________________________________ Հ Վ Հ Հ ☐☐☐☐☐☐☐☐

Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

_______________________________________________________________ ____________________

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները (հեռախոսահամարը)

_______________________________________________________________ ____________________

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _______ տրված՝ ______________________ 20____թ.

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ ______________________________________________________

_____________________________________________________________________________________________________

| N | ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆ |
|---|---|---|
| 1. | Տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | |
| 2. | Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող մասնաճյուղերը և գտնվելու վայրը | |
| 3. | Տնտեսավարող սուբյեկտի լիցենզիայի տեսակները | |
| 4. | Տնտեսավարող սուբյեկտի աշխատակիցների թիվը | |
| 5. | Տարեկան սպասարկվող պացիենտների միջին թիվը | |

ՀԱՐՑԱՇԱՐ

**ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, երեխաների խնամքի և հանրակրթական ուսումնական կազմակերպություններում հելմինթոզների համաճարակաբանական հսկողության կազմակերպման և իրականացման սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի պահանջների կատարման նկատմամբ իրականացվող ստուգումների**

| N | Հարց | Հղում նորմատիվ իրավական ակտին | Այո | Ոչ | Չ/Պ | Կշիռ | Ստուգման մեթոդ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.** | **Հելմինթոզներով հիվանդների հայտնաբերման նպատակով իրականացվում են լաբորատոր հետազոտություններ ներքոհիշյալ անձանց շրջանում.** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 15 | | | | | | |
| **1)** | բժշկական օգնության դիմած անձինք՝ հիվանդության կասկածի դեպքում | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **2)** | ստացիոնարում բուժվող ստամոքսաղիքային խանգարումներով, լյարդի և փայծաղի ախտահարումով, ալերգիաներով, լիմֆադենոպաթիայով, տենդով առաջնակի դիմած հիվանդներ, եթե այլ պատճառներ չեն հայտնաբերվել | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **2.** | **Բիոհելմինթոզներով հիվանդների հայտնաբերման նպատակով իրականացվում են լաբորատոր հետազոտություններ ներքոհիշյալ անձանց շրջանում.** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 16 | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1)** | ռիսկի խմբերում ներառված անձինք և նրանց ընտանիքի անդամներ (անասնաբուծական տնտեսությունների, մորթու մշակման կազմակերպությունների աշխատողներ, անասնաբույժներ, մսի արտադրության աշխատողներ, որսորդներ, մորթի մասնակիցներ, արգելանոցների աշխատողներ, մաքրման կայանների աշխատողներ) | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **2)** | բնակչության խմբեր, որտեղ գրանցվել է կենդանիների ցիստիցերկոզ (հետազոտությունների ծավալը որոշվում է համաճարակային իրավիճակից ելնելով) | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **3)** | համաճարակաբանական ցուցումով՝ տրիխինելաներով վարակված մսին օգտագործած անձինք մսի օգտագործումից 2 շաբաթ հետո | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **4)** | ստացիոնարում բուժվող նյարդաբանական խանգարումներով հիվանդներ, եթե այլ պատճառներ չեն հայտնաբերվել | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **5)** | բիոհելմինթոզով (տենիարինխոզ, տենիոզ (ցիստիցերկոզ)) հիվանդի ընտանեկան և կազմակերպ օջախում շփվածներ և ռիսկի խմբերում ներառվածներ | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **6)** | բիոհելմինթոզով (էխինակոկոզ, ալվեոկոկոզ) հիվանդի ընտանեկան օջախում՝ ընտանիքի անդամներ և կազմակերպ օջախում՝ աշխատակիցներ (եթե այդ աշխատակիցները ներառված են ռիսկի խմբերում), որոնց շրջանում իրականացվում են շճաբանական հետազոտություններ | | | | | 2.0 | Փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3.** | **Հպավարանցիկ հելմինթոզներով հիվանդների հայտնաբերման նպատակով իրականացվում են լաբորատոր հետազոտություններ ներքոհիշյալ անձանց շրջանում.** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 17 | | | | | | |
| **1)** | սննդի և դրանց հավասարեցված հաստատությունների աշխատողներ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 2 անգամ | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **2)** | մանկատների, երեխաների տների սաներ, գիշերային կացության կազմակերպությունների բնակիչներ՝ ընդունվելիս և հետագայում՝ տարին 2 անգամ | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **3)** | առողջարաններ, ճամբարներ մեկնող երեխաներ | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **4)** | ջրային սպորտաձևերով զբաղվող անձինք՝ սպորտային խումբ ընդունվելիս և հետագայում՝ տարին 2 անգամ | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **5)** | հպավարանցիկ հելմինթոզով հիվանդի ընտանեկան և կազմակերպ օջախում՝ շփվածներ | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **4.** | **Հողային հելմինթոզներով հիվանդների հայտնաբերման նպատակով իրականացվում են լաբորատոր հետազոտություններ հողային հելմինթոզների օջախներում՝ ընտանիքի անդամների շրջանում** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 18 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **5.** | **Հելմինթոզների ախտորոշումն իրակա-նացվում է համաձայն «Հելմինթոզների** | Առողջապահության նախարարի 2017 թվականի | | | | 2.0 | Փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **դեպքի ստանդարտ բնորոշումների»՝ համաճարակաբանական, կլինիկական, լաբորատոր ցուցանիշներով** | նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 19, գլուխ X-XII | | | | | | |
| **6.** | **Հելմինթոզների ախտորոշման համաճարակաբանական ցուցանիշի՝ համաճարակաբանական վերհուշի վերաբերյալ կատարվում է նշում «Ամբուլատոր բժշկական քարտի» և/կամ «Հիվանդության պատմության» մեջ** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 20 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **7.** | **Հելմինթոզների կասկածելի և հաստատված դեպքերը հաշվառվում են** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 27 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **8.** | **Հելմինթոզների լաբորատոր հաստատված դեպքերի վերաբերյալ ներկայացվում է հաշվետվություն** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 27 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **9.** | **Հելմինթոզով կասկածելի հիվանդի բժշկական փաստաթղթերում՝ մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում կամ երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում և հիվանդության պատմության մեջ կատարվում է գրառում նմուշի հետազոտության մասին (հետազոտության նշանակում, նմուշի վերցման ամսաթիվ) և փակցվում է լաբորատոր հետազոտության արդյունքը** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 28 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **10.** | **Հելմինթոզներով հիվանդների բուժումը կազմակերպվում է ամբուլատոր կամ ստացիոնար՝ կախված կլինիկական** | Առողջապահության նախարարի 2017 թվականի | | | | 2.0 | Փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **ցուցումից, հիվանդի վիճակից, հիվանդության փուլից** | նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 29 | | | | | | |
| **11.** | **Հելմինթոզներով հիվանդները դուրս են գրվում հելմինթազերծումից և լրիվ կլինիկական առողջացումից հետո՝ բուժման կուրսի ավարտից հետո կատարված լաբորատոր հետազոտության բացասական արդյունքի հիման վրա** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 30 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **12.** | **Հպավարանցիկ հելմինթոզներով հիվանդներին թույլատրվում է հաճախել կազմակերպություններ բուժման կուրսի ավարտից հետո կատարված լաբորատոր հետազոտության բացասական արդյունքի հիման վրա** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 31 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **13.** | **Հելմինթոզի օջախի համաճարակաբանական հետազոտությունն իրականացվում է 48 ժամվա ընթացքում և ներառում է հիվանդի և նրա հետ շփված անձանց հարցում, փաստաթղթերի ուսումնասիրություն, լաբորատոր և գործիքային հետազոտություններ, դիտարկում առավելագույն գաղտնի շրջանի տևողությամբ** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 33 | | | | 2.0 | Փաստաթղթային<br>Հարցում | |
| **14.** | **Հելմինթոզի օջախում, կախված հելմինթոզի տեսակից իրականացվում են սանիտարա-համաճարակային միջոցառումներ.** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 34 | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1)** | հպավարանցիկ հելմինթոզով և բիոհելմինթոզով հիվանդի օջախում գտնվող և նրա հետ միևնույն ռիսկի ազդեցության ներքո գտնված անձանց շրջանում հարցում և անհրաժեշտության դեպքում՝ լաբորատոր հետազոտություն | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **2)** | երեխաների խնամքի և կրթական կազմակերպություններում հպավարանցիկ հելմինթոզի կամ բիոհելմինթոզի՝ տենիարինխոզի կամ տենիոզի հայտնաբերման դեպքում հիվանդների՝ կազմակերպ օջախ հիվանդների հաճախման սահմանափակում՝ մինչև բացասական լաբորատոր պատասխանի ստացումը | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **3)** | հասարակական լողավազաններ հաճախող հիվանդ երեխաների այցելության սահմանափակում | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **4)** | Հելմինթոզներով հիվանդների օջախներում առողջ ապրելակերպի քարոզչություն | | | | | 2.0 | Փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **5)** | տենիդոզների օջախում՝ մարդու արտաթորանքներով աղտոտված հողի հատվածների, էխինակոկոզի օջախում՝ կենդանիների, մասնավորապես շների արտաթորանքներով աղտոտված հողի հատվածների վարակազերծում, խաղահրապարակների մաքրում կենցաղային աղբից, ավազի փոխում կամ վարակազերծում | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **6)** | օջախներում միջավայրի սանիտարական վիճակի հսկողության, վարակի փոխանցման գործոնների և ուղիների որոշման նպատակով արտաքին միջավայրի սանիտարամակաբուծաբանական հետազոտությունների իրականացում | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **7)** | հպավարանցիկ հելմինթոզի կամ բիոհելմինթոզի օջախում՝ արտաքին միջավայրի առարկաների մակերեսներից լվացուկների, հողային հելմինթոզների և բիոհելմինթոզների օջախներից՝ մրգերի, բանջարեղենի, հողի նմուշների, խաղահրապարակների ավազի, բաց ջրամբարների ջրի նմուշառում և հետազոտություն | | | | | 2.0 | Փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **8)** | Արտաքին միջավայրի նմուշները վերցվում են մինչև սանիտարահամաճարակային միջոցառումներ իրականացնելը և կանխարգելիչ միջոցառումներից հետո՝ դրանց արդյունավետությունը ստուգելու համար. | | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| **15.** | **Բժշկական կազմակերպության կողմից իրականացվում է հելմինթոզների կանխարգելմանն ուղղված քարոզչական աշխատանք, ինչի մասին կատարվում է գրանցում հիվանդի բժշկական փաստաթղթերում՝ մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում կամ երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում, հիվանդության պատմության մեջ** | Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրաման, հավելված, կետ 36 | | | | 2.0 | Փաստաթղթային | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | **«Այո»-առկա է, համապատասխանում է նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, պահպանված են նորմատիվ իրավական ակտերի պահանջները** | V | | |
| 2. | **«Ոչ»-բացակայում է, չի համապատասխանում, չի բավարարում նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, առկա են խախտումներ** | | V | |
| 3. | **«Չ/Պ»-չի պահանջվում** | | | V |

**Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտի հիման վրա՝**

1. Առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի N 51-Ն հրաման:

**Տեսչական մարմնի ծառայող** __________________
(ստորագրություն)

**Տնտեսավարող** ___________________ »:
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ